կաւ ինչ զբօսնուլ. և ապա եթէ տէր կամեսցի ելանելոց եմք ի ճանապարհ կամ ծովու և կամ ցամաքով աճապարել ի լիկուրնայ, և կամ ի Զիւիթայ Վէքքհա, և անտի աստուծով ի Հռօմ։ Եւ բաց յայսցանէ առ այժմս զայլ ոչ ինչ ունիմ զեկուցանելոյ երջանկութեանդ. միայն թէ զաղօթս խնդրեմ ի մաքրակրօն եղբայրութենէ ձերմէ, առ ի տեսանել միւսանգամ զմիմեանս, և հրճուիլ Տերամբ։ Նաև ի մէջ գրոյս եղեալ զիրն հասուսցես Սեղբոսեան Յոհաննէս աղային ուր ուրեք և իցէ։ Վերջապէս համայն միաբան եղբարց մեծաւ կարօտիւ ողջոյն սիրոյ ընծայեմ. ընդ որոց նաև փափազեան մահտեսի Ստեփանին, առ որ ունիմ խօսել վասն անցիցն Ասկէրեան Պարոն Յարութիւնին. ողջ լեր ի Տէր բաւ է։

1772 ի Հոկտեմբերի ԺԵ
ի Նազարէթն Մարչիլիայու

Ամենանուաստ Ծառայ Տեառն Յիսուսի
Սարգիս վրդ. և Արքեպիսկոպոս
Կոստանդնուպօլսեցի

Ընդ իս եղեալ Հայր Յոհաննէս աշակերտն իմ
մեծաւ յարգանօք ողջունէ զձեզ։